ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 09

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 16.12. 2020թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ հեռահար կապի միջոցով

Հաղորդագրություններ են ուղարկել ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 12-ը (տասներերկու):

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
4. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի օգնական
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
7. Թ.Խաչատրյան՝գրադարան - ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
8. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
9. Լ. Մարտիրոսյան՝բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ,
10. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
11. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
12. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված արտակարգ դրության պայմաններում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի բակալավրի առկա/հեռակա և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի, գիտելիքների գնահատման, լուծարային շրջանի կազմակերպման, ամփոփիչ ատեստավորման ու պրակտիկաների առցանց կազմակերպման և ուսուցման հետ կապված որոշումների ուժի մեջ մնալու մասին

2. Վարձավճարի խնդիրներով պայմանավորված քննաշրջանին և լուծարային շրջաններին չներկայացած բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորող ուսանողներին անհատական ժամանակացույցով իրականացվող հիմնական և լուծարային քննաշրջաններին մասնակցելու թույլտվության մասին

3. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված արտակարգ դրության պայմաններում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի բակալավրի առկա/հեռակա և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի, գիտելիքների գնահատման, լուծարային շրջանի կազմակերպման, ամփոփիչ ատեստավորման ու պրակտիկաների առցանց կազմակերպման և ուսուցման հետ կապված որոշումների ուժի մեջ մնալու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված արտակարգ դրության պայմաններում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի բակալավրի առկա/հեռակա և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի, գիտելիքների գնահատման, լուծարային շրջանի կազմակերպման, ամփոփիչ ատեստավորման ու պրակտիկաների առցանց կազմակերպման և ուսուցման հետ կապված որոշումները (գիտխորհրդի նիստերի որոշումներ՝ թիվ 16-11.05.2020թ., թիվ 17-14.05.2020թ., թիվ 4-26.10.2020թ., ռեկտորատի որոշումներ՝թիվ 14-17.03.2020թ., թիվ 16-22.04.2020թ., թիվ01-10.09.2020թ.) մնում են ուժի մեջ մինչև առցանց ուսուցման դադարեցումը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Վարձավճարի խնդիրներով պայմանավորված քննաշրջանին և լուծարային շրջաններին չներկայացած բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորող ուսանողներին անհատական ժամանակացույցով իրականացվող հիմնական և լուծարային քննաշրջաններին մասնակցելու թույլտվության մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորող այն ուսանողներին, որոնց թույլ չի տրվել մասնակցելու քննաշրջանին և լուծարային շրջաններին վարձավճարի խնդիրներով պայմանավորված, հնարավորություն տալ անհատական ժամանակացույցով իրականացնելու հիմնական և լուծարային քննաշրջանները՝ ֆինանսական պարտավորությունները բուհի նկատմամբ կատարելուց հետո՝ պաշտպանելով իրենց ուսանողական իրավունքները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.1 Ընթացիկ հարցեր

Պարոն Սերոբյանը ռեկտորատի անդամներին տեղեկացրեց, որ ՀՀ կառավարության 10 դեկտեմբերի 2020 թ.-ի N 2008 – L որոշման համաձայն պետությունը 100 տոկոս փոխհատուցում կտրամադրի 2020 թ.ի սեպտեմբերի 27ից Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված պատերազմի մասնակից ուսանողներին և մարտական գործողություններին մասնակիցների ուսանող զավակներին,կնոջը կամ ամուսնուն:
Համաձայն ՀՀ կառավարության որոշման՝ ամբողջությամբ կփոխհատուցվի 2020թ.-ի առաջին կիսամյակի ուսման վարձավճարը:

Պարոն Սերոբյանը հանձնարարեց դեկաններին առավել ուշադրության արժանացնել վերոգրյալ որոշման շահառուների անվանացանկի կազմմանը, որպեսզի ոչ մի ուսանող դուրս չմնա, ինչպես նաև բուհին ներկայացվող համապատասխան փաստաթղթերի բնօրինակները դեկանատներ ներկայացվեն, իսկ պատճենները՝ Է. Զարգարյանին՝ նախարարություն ներկայացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Տեղեկությունն ընդունել ի գիտություն:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ	Ն. Ավետիսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկանի ԺՊ՝	Լ. Մարտիրոսյան
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.և իրավ.ապահովման բաժնի պետ՝	Ա. Հովհաննիսյան